

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աճուրդային-մրցույթային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի, ավտոմեքենաների բաց դասական եղանակով աճուրդ-վաճառք, որը տեղի կունենա 2019թ. օգոստոսի 22-ին ժամը 11:00-ին համայնքապետարանի վարչական շենքում (ք. Վայք, Շահումյան 18):

### Աճուրդ

**լոտ 1.** ծածկագիր 10-005-0112-0030, հասցեն՝ Վայք համայնք, գ. Ագատեկ, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի, հողամասի չափը՝ 8.9739 հա, մեկնարկային գինը՝ 19950000դրամ: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:

**լոտ 2.** ծածկագիր 10-003-0024-0322, հասցեն՝ Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փ. 97/1/1 նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատում, հողամասի չափը՝ 0.00126հա, մեկնարկային գինը՝ 10500դրամ: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:

**լոտ 3.** ՎԱԶ 2103 մակնիշի 1975թ. արտադրության 535LՍ56 պետհամարանիշի ավտոմեքենա, մեկնարկային գինը՝ 95000դրամ:

**լոտ 4.** ՎԱԶ 21214-130-20 մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենա: Մեկնարկային գինը՝ 365000դրամ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիրը և անձնագիր (իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը):

Աճուրդի անցկացման օրը մասնակիցը վճարում է նախավճար՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Հայտերի ընդունումը և գրանցումը դադարեցվում է աճուրդի կայացման օրվանից 3 օր առաջ:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Վայքի համայնքապետարան կամ զանգահարել +37498 77 22 91 հեռախոսահամարով:

)